

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ «ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՅ»-Ը ԵՎ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ  
ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ

**Գրիգոր Տաթևացու նշանավոր «Գիրք հարցմանց»-ը Ս. Գրքի երբևիցե գրված ամենահամակողմանի և ամբողջական մեկնությունն է: Այն ներառում է Հին և Նոր կտակարանները՝ ամբողջությամբ:**

Ի՞նչ խնդիր էր դրել Գրիգոր Տաթևացին իր առջև՝ այդ մեկնությունը գրելով, որ այդ տարիներին Տաթևի համալսարանի թափունապետն էր: Հարցի պատասխանը կարևորվում է այնքանով, որ Ս. Գրքի այս մեկնությունը բացառիկ տեղ ունի հայ եկեղեցու պատմության մեջ՝ պատմական իրադարձությունների բերումով մի քանի դար ընդմիջումից հետո այսօր դարձյալ հայտնվելով հայագիտության և հայ եկեղեցու ուշադրության կենտրոնում:

Հնչեցրած հարցի պատասխանը գտնում ենք «Գիրք հարցմանց»-ի առաջաբանում և հիշատակարանում, որտեղ հեղինակը նկարագրում է իր աշխատանքի կառուցվածքը, աղբյուրները, շարադրում նպատակը:

Մի քանի խոսք Գրիգոր Տաթևացու ապրած ժամանակաշրջանի մասին:

Մի քանի դար շարունակ ստեղծված բարձրարժեք գրականությունը, այդ թվում նաև՝ մեկնողական, Տաթևացու օրերում ավելի ու ավելի անհասկանալի էր դառնում լեզվի խրթինության պատճառով, իսկ պատմական իրադարձությունների բերումով Տաթևացին ականատես էղավ նաև հայոց պետականության անկմանը: Վերջին հանգամանքը Տաթևացուն ստիպեց 1114 թվականից տարանջատված կաթողիկոսական աթոռները միացնելու փորձեր կատարել: Միաբանության ջատագովումը և այդ ուղղությամբ գործնական քայլեր անելը այս պայմաններում նրա կողմից դարձավ այդ իրավիճակից դուրս գալու ելքի մատնանշում: Տաթևացու նպատակը էր միաբանել ժողովրդին, տեսականորեն և գործնականորեն ամրապնդել այդ միաբանության հիմքերը: Սրան են նպատակաուղղված եղել նաև նրա աշխատությունները, դրան է հասցեագրվել նրա գործունեությունն ամբողջությամբ:

Ընդհանրացնելով ողջ հայրաբանական գրականությունը՝ Գրիգոր Տաթևացին իր աշխատություններով ընդհանրապես և «Գիրք հարցմանց»-ով

մասնավորապես, միջնադարյան մշակութային միտքը բարձրացրեց է մի նոր աստիճանի:

Առանց երկբայելու, կարող ենք ասել, որ «Գիրք հարցմանց»-ը գրելով՝ Գրիգոր Տաթևացին փորձել է ակնառու դարձնել մարդու և աստվածայինի ընդհանրությունը՝ սիրո, լուսավորության տարածման, հայրենասիրության բազմաթիվ օրինակների ու վերլուծությունների միջոցով և հատկապես պաշտպանելով հայ եկեղեցու դատը: Առանցքային այս գաղափարներն են, որի շուրջ նա կառուցել է իր մեկնությունը՝ բաժանելով այն տասը հատորների, սրանք իրենց հերթին՝ քառասուն գլուխների, սրանք էլ իրենց հերթին՝ պրակների (վերջիններս ըստ էության յուրաքանչյուր անգամ տրվող հարցի պատասխաններն են):

Հեղինակը «Գիրք հարցմանց»-ը իր իսկ բառերով՝ համարում է իբրև տուրք «Ձերդ մեծության՝ իմաստասեր և ճշմարտասեր Հայաստանյայց եկեղեցուն և ընթերցասեր մտքին», որը կյանքի կոչելու համար նա կատարել էր հսկայական հավաքչական («Արդ, ես... ստեղծեցի «Գիրք հարցմանց»-ը եկեղեցու վարպետների լուսավոր գրքերից», ...«բաներ կան, որոնք քաղված են սուրբ վարդապետների լուսավոր թղթերից՝ [դիմելով] կամ գրքերին, կամ՝ [բանավոր] իմացությանը») և ինքնուրույն աշխատանք («Եվ բաներ էլ կան, որոնք [շարադրվել են] Աստծո Հոգու շնորհների ներգործությամբ»<sup>1</sup>):

Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի Համաբարբառի մեր հրատարակությամբ մեր ոսկեդինիկ գրաբարի բառանյութը համալրվեց ևս մի քանի հարյուր նոր բառով:

«Գիրք հարցմանց»-ի կառուցվածքը բավականին հետաքրքիր է, և արդեն իսկ տասը հատորների թվարկումը հեղինակի կողմից պարզորոշ պատկերացում է տալիս գրքի գաղափարական ուղղվածության վերաբերյալ.

**«Առաջինն՝** առ արտաքինս առարկություն: Եւ լուծումն ընդդիմախօսութեան նոցա, որք զհարկ և զճակատագիր, զչարս և զբարիս՝ յաստուծոյ համբաւեն: Եւ ընդդէմ մանիքեցոց, և հրէից:

**Երկրորդն՝** ընդդէմ արիոսի, և հոգեմարտիցն. և նեստորի, և երկաբնակացն:

**Երրորդն՝** ճշմարիտ աստուածաբանութեան սրբոյն դիոնիսի՝ ցուցումն սակաւութ:

**Չորրորդն՝** վասն վեցօրէից. և արարչութեան բոլոր աշխարհի:

---

<sup>1</sup> Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց. Կ.Պոլիս, 1729, էջ 772:

**Հինգերորդն՝** ի կազմութեան լինելութեան մարդոյն:

**Վեցերորդն՝** ի նոյն ինքն յարարածոց սկզբանէ՝ ըստ կարգի պատմութեան և գրոցն մովսէսի:

**Եօթներորդն՝** յետու և դատաւորք և դ թագաւորութեանցն համառօտեալ:

**Ութերորդն՝** ի նոր կտակաց մարդեղութեան բանին աստուծոյ:

**Իններորդն՝** ի նորս եկեղեցւոյ հարցմունք զանազանք:

**Տասներորդն՝** վասն փոփոխման. և կատարածի աշխարհի. Յարութեան, և դատաստանին հատուցման»<sup>2</sup>:

Սրանք, ինչպէս նշեցինք, հետո տրոհվում են քառասուն գլուխների: Քառասուն գլուխներից (որոնք հեղինակն անվանում է «գլխաւոր բանք Սուրբ Գրոցս») Հին կտակարանի մեկնությունն ընդգրկված է 29-ը գլուխներում.

ա) Ընդդէմ նոցա որք զբախտ և զհարկն ասեն

բ) Վասն ճանաչմանն աստուծոյ

դ) Ընդդէմ հրէից

ե) Ընդդէմ արիոսեանցն

զ) Ընդդէմ հոգեմարտիցն

է) Ընդդէմ նեստորի և երկաբնակացն

ը) Աստուածաբանութիւն դիոնէսիոսի

թ) Վասն հրեշտակաց և դիւաց

ժ) Վասն գործոյ և արարչութեանն Աստուծոյ

ժա) Վասն արարածոց և աշխարհի

ժբ) Վասն լուսաւորաց և աւուրց և եղանակաց

ժգ) Վասն իւրաքանչիւր տարերց և բուսոց և կենդանեաց

ժդ) Վասն դրախտին

ժե) Վասն կազմութեան մարդոյն

ժզ) Վասն հոգւոյ մարդոյն

ժէ) Վասն բոլոր մարդոյն

ժը) Վասն արէլի և նախահարցն

ժթ) Վասն արբահամու և իւրոցն

ի) Յելից գրոցն

---

<sup>2</sup> Գրիգոր Տաթևացի, նույնը, էջ 3:

իա) Ղևտականն

իբ) Թիւքն

իգ) Երկրորդ օրէնքն

իդ) Յետու նաւեայն

իե) Դատաւորքն

իզ) Առաջին թագաւորութեանցն

իէ) Երկրորդ թագաւորութեանցն

իը) Երրորդ թագաւորութեանցն:

30-40-րդ գլուխները ներառում են Նոր կտակարանի մեկնությունը՝ հետևյալ վերնագրերով.

լ) մարդեղութիւն Փրկչին.

լա) Վասն նոր օրինաց:

լբ) Վասն մեղաց:

լգ) Վասն առաքինութեանց:

լդ) Վասն եօթն խորհրդոց:

լե) Վասն առանձին եկեղեցւոյ մեր:

լզ) Վասն փոփոխման մարդոյն:

լէ) Վասն բաժանման հոգւոյն:

լը) Վասն նեոին:

լթ) Վասն յարութեանն կրկին:

իւ) Վասն գալստեանն դատաստանին:

41-րդ գլուխը, այսպես կոչված «Փոքր հարցմունքն» է կամ՝ «Հարցմունք Գեորգեայ» աշխատությունը, որ գրեթե բոլոր ընդօրինակողների կողմից միշտ դիտվել է իբրև «Գիրք հարցմանց»-ի շարունակություն: Այն դարձյալ կառուցված է հարց ու պատասխանի ձևով (14 հարց ու պատասխան):

Կա «Գիրք հարցմանց»-ի բովանդակության հետ կապված մի հանգամանք ևս: Ի սկզբանե գրքի գրչագիր տարբերակը ունեցել է նաև «Ընդդէմ տաճկաց» ենթավերնագիրը, որը սակայն առաջին իսկ տպագիր հրատարակության ժամանակ (1729 թվական, Կ.պոլիս) դուրս է թողնվել՝ մի պարզ պատճառով, որ գրքի տպագրությունն ուղղակի կարգելվեր այդ երկրում, եթե գրքում ներառվեր այդ ենթավերնագիրը:

Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության մեջ հիմնական մաս են կազմում մեկնողական բնույթի աշխատությունները. սրանք մի կողմից ընդհանրացրել են միջնադարյան նախորդ հեղինակների վերլուծությունները, մյուս կողմից՝ սեփական հետաքրքիր ընդհանրացումների շնորհիվ նոր խոսք են բերել մեկնողական գրականության մեջ:

Ընդհանրացնելով ողջ հայրաբանական գրականությունը՝ Գրիգոր Տաթևացին իր աշխատություններով ընդհանրապես և «Գիրք հարցմանց»-ով մասնավորապես, միջնադարյան մշակութային միտքը բարձրացրեց է մի նոր աստիճանի:

Ստորև բերվում են գրքի և՛ առաջաբանը և՛ հիշատակարանը՝ բնագրով և թարգմանաբար, որովհետև մի կողմից՝ դրանք կարելի է արժևորել նախ որպես **հայ եկեղեցու ծրագրային փաստաթուղթ**, իսկ մյուս կողմից՝ դրանք չափազանց հետաքրքրական են որպես հայ միջնադարյան միտքը եզրափակող հեղինակի ընդհանրացում, հաշվի առնելով նաև, որ դրանք պարունակում են **այսօրվա ուսումնասիրողին ուղղված ուղերձներ**, իսկ հիշատակարանի վերջում հեղինակը հորդորում է անուշադրության չմատնել այն:

Արձանագրենք նաև, որ հայոց եկեղեցու սրբերի շարքին դասվելը այն վեհաշուք գնահատականն է, որին արժանացավ Գրիգոր Տաթևացին՝ իր ծառայությունների համար:

### **«Յառաջաբան Սուրբ Գրոցս**

Ներգործական իմն մշտաշարժ բնաւորեալ ելոյ զօրէն վերընթաց հրոյ՝ բանեղէն իմացումն մարդոյ, ո՛չ ունելով դուլ՝ մինչ յեզերիլ առ կայումն կատարման իւրոյ: Եւ է՛ կատարումն բանի՝ ճշմարիտն. որպէս և ներգործոյ՝ բարին: Եւ այսու իսկ տեսականաւ և գործնականաւ զարդարի հոգիս մեր զանազանապէս: Ջի գործնականն է կախեալ զյօժարակա՛նն կամաց: Իսկ տեսականն՝ առ իմացակա՛նն մասն է: Նաև յառաջանայ տեսականն հասեալ առ ճշմարիտն. շարժելով զյօժարականն ի բարին:

Արդ՝ տեսականին գիտութիւն հասարակի՛ առ իրողութիւն. որպէս և որքան. յորոց ոմանք գերազանցեալ գոն իմացութեան. և այլք ի ներքոյ տրամախոհութեան: Եւ այս մեզ անհաս՝ դիւրահաս՝ և դժուարահա՛ս բացորոշեցի: Եւ զի անհասն ո՛չ է այժմու տեսութեան. և դիւրահասն՝ զգայութեան արտաքոյ լիցի. իսկ դժուարահասն եռարի կերպիւ գիտելի:

Առաջին, սահմանելով զպարզն, և բաժանմամբ զբաղադրեալս, և հաւաքմամբ զճշմարտութիւն խնդրելոյ հարցմանց: Ջի ամենայն հարցումն խընդիր է պատասխանոյ. և առ նա՛ ունի զդիտումն որոնելոյ. Իսկ հարցումն երկակի՛ է՝ և պատասխանին: Ջի է՛ պարզ հարցումն և

բաղադրեալ. և պարզ պատասխանի՝ և բաղադրեալ: Որ և հարցմանն սեռ՝ յերկուս տեսակս տարորոշի. ի տրամաբանական. և յապացուցական:

Եւ է՝ տրամաբանութիւն, որ մինն հարցանէ և միւսն պատասխանէ՝: Նոյնպէս և ապացուցականն:

Սակայն այլազանին: Նախ՝ զի տրամաբանութեան սկիզբն ի յայլմէ է. այս է ի հարցողէն. թէ զի՞նչ հարցանէ, կամ ուստի՞: Իսկ ապացուցականն զըսկիզբն յինքենէ՝ ունի որպէս և կամի:

Եւ ևս: Ապացուցականին կատարումն առ ճշմարիտն է և ամեննին: Իսկ տրամաբանականին մերթ ճշմարիտ և մերթ սուտ: Զի թէ զիտէ պատասխանօղն՝ առ ճշմարիտն է. և թէ ոչ՝ առ սուտն:

Եւ այլ ևս: Զմինն շառագունէ՝ տրամաբանականն, այս է զհարցանօղն, կամ զպատասխանօղն: Իսկ ապացուցականն ո՛չ գոք, ո՛չ զուսանօղն, և ո՛չ զուսուցանօղն:

Չորիք ևս: Ապացուցականն զպարզն հարցանէ և պատասխանէ. որպէս՝ մարդն կենդանի է. կենդանին գո՛յ է. ապա ուրեմն մարդն կենդանի և գո՛յ է: Իսկ տրամաբանականն զբաղադրեալն. որ է՝ հակասութեան երկոքին կողմն. վասն որոյ պատասխանելի՛ է և բաղադրեալ: Այլ թէ բաղադրեալ հարցման պարզ պատասխանես, լինիցիս շառագունեալ: Որպէս թէ ոք հարցանէ. աշխարհս անապակա՞ն է, թէ ապականացու. այս բաղադրեալ է: Թէ պատասխանես զպարզն անապական գոյ, սո՛ւտ ես. զի մասամբ ապականի: Իսկ թէ ապականացու, դարձեալ սուտ. զի երկինք և տարերք անապականք գոն. վասն որոյ բաղադրեալ պատասխանի, թէ՝ ըստ բոլորին անապական է, և ըստ մասին ապականացու:

Դարձեալ ըստ այլ եղանակի զանազանին սոքա: Նախ՝ որպէս յամենայն իրողութիւնս չորս իր խնդրելի է ըստ փիլիսոփային. այսինքն՝ թէ է՞. զինչէ. ո՞րպիսի ինչ է. վասն է՞ր է: Արդ՝ եթէ էն միա՛յն է տրամաբանական հարցումն. իսկ զինչէն և որպիսի ինչէն՝ ապացուցական հարցումն: Երկրորդ՝ զի չո՛րք են զանազանութիւնք ձայնի և իմացման: Զի է՛ որ ձայնն մի է և իմացեալ իրն բազում. որպէս կենդանի. կամ բանական կամ հոմանուն ձայնք: Եւ է՛ որ ձայնն և իմացումն բազում. որպէս պետրոս խօսի, պօղոս քարոզէ՛: Եւ է՛ որ ձայնն բազում, և իմացեալ իրն մի. որպէս կենդանի բանական երկոտանի մարդն:

Եւ է՛ որ ձայնն մի՝ և իրն մի. որպէս մարդ՝ պետրոս: Արդ՝ երկու ի նոցանէ՝ այն որ ձայնն բազում է և իրն մի, և որ ձայնն և իրն մի, են սոքա տրամաբանական հարցումն: Եւ երկուքն՝ ձայնն և իրն բազում, և ձայնն մի և իրն բազում սոքա են ապացուցական հարցումն: Երրորդ՝ զի տրամաբանականն՝ զհակասութեան զերկու կողմն հարցանէ, և պատասխանի զմիո՛յն առնու: Որպէս թէ ոք հարցանէ՛, պետրոս նստի՞ թէ ոչ.

պատասխանին զմին կողմն ասէ, այո՛ կամ ո՛չ: Իսկ ապացուցականն զմին կողմն հարցանէ. այսինքն զստորաստութիւնն՝ թէ զի՞նչ է մարդ. զի՞նչ երկինք: Չորրորդ՝ զի ի տրամաբանութեան մի է հարցումն, և մի պատասխանի. որպէս ցուցաւ: Իսկ յապացուցականին՝ կարէ՛ լինիլ միոյ հարցման բազում պատասխանի. և բազում հարցմանն՝ մի: Որպէս թէ ոք հարցանէ. զի՞նչ է մարդ. պատասխանեմք զսահմանն. որ է՝ բազում:

Եւ զի՞նչ է սահմանն որ ասէ՝ կենդանի բանաւոր. ասեմք թէ մարդն է: Ապա ուրեմն յա՛յտ է զի առաջիկայ հարցմունքս է՝ առաւել ապացուցական ճշմարտացոցութեան. քան տրամաբանական հակաճառութեան:

Եւ զի յամենայն իրս գործառնութեան՝ չորիցս խնդրին պատճառք. Արարողական. Նիւթական. Տեսական և Կատարունական. այսինքն. Արարողն և Արարեալն և Արարումն, և Պատճառ նորին: Որպէս ի շինութիւն տան, Արուեստաւոր՝ հիւսն. և Շինեալ՝ տունն. և Որպիսութիւն նորին՝ բոլոր, կամ քառանկիւնի. և Պատճառ նորին վասն բնակութեան մարդոյ:

Իսկ առաջիկայ իրողութեանս, Նիւթական պատճառ և ենթակայ՝ է՝ տասն իմն սեռական հատոր հարցմանցս այսոցիկ: Որոց յարմարումն շարակարգութեան՝ է՝ ըստ այսմ օրինակի:

Առաջինն՝ առ արտաքինս առարկութիւն: Եւ լուծումն ընդդիմախօսութեան նոցա, որք զհարկ և զճակատագիր, զչարս և զբարիս՝ յաստուծոյ համբաւեն: Եւ ընդդէմ մանիքեցոց, և հրէից: Երկրորդն՝ ընդդէմ արիոսի, և հոգեմարտիցն. և նեստորի, և երկաբնակացն: Երրորդն՝ ճշմարիտ աստուածաբանութեան սրբոյն դիոնիսի՝ ցուցումն սակաւութ: Չորրորդն՝ վասն վեցօրէից. և արարչութեան բոլոր աշխարհի: Հինգերորդն՝ ի կազմութեան լինելութեան մարդոյն: Վեցերորդն՝ ի նոյն ինքն յարարածոց սկզբանէ՛. ըստ կարգի պատմութեան ե գրոցն մովսէսի: Եօթներորդ՝ յեսու և դատաւորք և դ թագաւորութեանցն համառօտեալ: Ութերորդ՝ ի նոր կտակաց մարդեղութեան բանին աստուծոյ: Իններորդն՝ ի նորս եկեղեցոյ հարցմունք զանազանք:

Տասներորդն՝ վասն փոփոխման. և կատարածի աշխարհի. Յարութեան, և դատաստանին հատուցման:

Արդ՝ ա՛յտքիկ են Նիւթական պատճառք այսոցիկ հարցմանց. իսկ Տեսական և Կատարունական, Նո՛յն է լուծումն բանից ընդ դիմակաց. և Յանգումն՝ առ ճշմարիտ հաւանութիւն խոստովանութեան մերս եկեղեցոյ իմաստասիրեալ: Իսկ հաւաքականն պատճառ գոլոյ, իմս ապիկարութեան տխեղծ մասին և տկար անձին գրիգորի բանասիրի: Ի խնդրոյ ուրումն աշակերտի՝ Ատոմի ուղղափառի: Որ և մակագրեցի յորջորջումն գրոյս ըստ կոչմանն իրի, Հարցմունք Գրիգորի Սպասաւորի:

Այլ և պատճառ սորին երիցս եղև մեզ հանդիպեալ: Նախ՝ ըստ վերոկոչեցեալն աստմի. բազում անգամ և յաշակերտաց իմ աղաչեցեալ զխնդիրս ոմանս լուծանել:

Ձոր ո՛չ եղև հնար ընդ դիմադարձ լինիլ: Երկրորդ, երկուցեալ յաստուածախօսն անկանիլ տուգանս. որ զհաւատացեալն թաքոյց քանքար: Զմեծութիւնն զոր եկուլ՝ հանցէ յորովայնէ նորա. որ ծածկէ զբանն աստուծոյ ի սովեցելոյն ասէ: Երրորդ, զի աշխատութիւն իմ՝ մի միայն լիցի ներկայիս լսելոյ, հո՛գ տարայ և յետնոցն գրչաւ աւանդել: Աղաչելով, եթէ որ դեգերեցի ի սմա՛ ընթերցմամբ, վասն իմ մաղթանս մատուցանել աստուծոյ:

Ա՛րդ՝ հիմն գործոյս՝ ի վերայ անշարժ վիմին քրիստոսի կայասցի: Եւ բոլորն շինուած՝ չորիւք սեամբք հաստատեսցի: Զառաջին սիւնն կանգնեսցէ առաքելականն քարոզութիւն: Զերկրորդն՝ մարգարեականն վկայութիւն: Զերրորդն՝ մեկնողացն ուղղութիւն: Զչորրորդն՝ ընթերցողացն հաւանութիւն և ճշմարտասիրութիւն:

Եւ մի՛ որ կասկածեսցէ երկբայական մտօք՝ բիծ ինչ թիրութեան ի բանից սրբոց հաւաքել: Եւ ասեմ ո՛չ ըստ գիտութեան իմաստութեան, որոց բազում են սխալանքն. և ես ինձէն գիտեմ զպակասն և զյաճախն. զանկարգն և զկրկինն ևս. որպէս յա՛յտ է քննութեամբ խնդրողացն: Այլ ըստ ճշմարտութեան ուղղափառութեան հոգ տարեալ յամենայն կամաց ո՛չ զոլ եպերանք մտադիր իմացողաց մերս միաշնուչ համաձայնութեանց:

Այլ և աղաչեմ հարկելի՛ վրճաւ, ոչինչ ըստերիւրել ի սմանէ կամակա՛ր մտօք. որպէս այնքիկ որք սովո՛ր են զգիրս սուրբս եղծանել և թիրել. և դատապարտութիւն անձանց իւրեանց նիւթել: Վասն որոյ գրեալ է, եթէ որ յաւելցէ ինչ ի սմա՛ խոտորեալ մտօք, յաւելցէ՛ տեր ի վերայ նորա զամենայն հարւածս գրեալս ի սմա: Նաև թէ պակասեցուցէ նոյն մտօք, պակասեսցի և ինքն ի գրոյն կենաց գրեալ ի գիրս յայսմիկ: Ամէն Եղիցի՛ Եղիցի: Այլ ուշիմ մտօք և հոգացող գաղափարօղքն, գրեցեալ լիցին ի գիրն կենաց անջնջելի յիշատակութեամբ: Ամէն Եղիցի՛ Եղիցի»<sup>3</sup>:

## «ԱՌԱՋԱԲԱՆ ՍՈՒՐԲ ԳՐՔԻ

Դեպի վեր ծառացող հրի նման, վերելքին հաստուկ մշտաշարժությամբ, մարդու բանական իմացումը չունի դադար՝ մինչև նրա գոյության վախճանը: Եվ խոսքի մեջ նրա վախճանակետը ճշմարտությունն է, իսկ գործի մեջ՝ բարին: Այսպես են զարդարվում մեր հոգիները՝ տեսականորեն և գործնականապես: Գործնականն էլ կախված է մեր կամքից, իսկ տեսականը կազմում է իմացականի մասը: Շարժվելով հոծարակամ ի բարին՝ տեսական իմացումն առաջ գնալով, հասնում է ճշմարտությանը: Եվ ոմանք տեսական իմացությունը այսչափ կամ այնչափ զուգորդելով իրականությանը՝ ձեռք են բերում գերազանց իմացություններ, ոմանք էլ դա անում են տրամախոհությամբ: Իսկ իմացությունները երեք տեսակ են լինում. անհասանելի, դյուրամատչելի,

---

<sup>3</sup> Գրիգոր Տաթևացի, նույնը, էջ 2-5:

դժվարամատչելի: Անհասանելին այժմ քննելու նյութ չէ, դյուրամատչելին զգայություններին է թողնվում, իսկ դժվարամատչելին իմացվում է երեք կերպ:

Առաջին, սահմանելով պարզը, տարաբաժանել բաղադրյալը և ի մի բերել ճշմարտությունը՝ քննվող հարցի մասին, քանի որ յուրաքանչյուր հարց պատասխան է պահանջվում և իր մեջ պատասխանի հանդեպ որոնման քննություն է պարունակում: Հարցն ու պատասխանը երկակի բնույթ ունեն. կան պարզ և բարդ հարցեր, ինչպես և՛ պարզ և բարդ պատասխաններ:

Հարցադրումները երկու տեսակ են լինում՝ տրամաբանական և ապացուցողական: Տրամաբանական հարցադրումն այն է, երբ մեկը հարցնում է, մյուսը՝ պատասխանում. այսպիսին է նաև ապացուցողական հարցադրումը, սակայն զանազանվում են. նախ՝ տրամաբանական հարցադրումն սկսվում է հարց տվողից, այսինքն թե ինչ հարց է տալիս կամ որտեղից: Իսկ ապացուցողական հարցադրման մեջ արդեն պատասխան կա: Ապացուցողական հարցադրումները ճշմարտին են հանգում, իսկ տրամաբանականը մերթ՝ կարող է ճշմարիտ լինել, մերթ՝ սուտ, կախված այն բանից, թե պատասխանողը գիտի ճշմարիտ պատասխանը, թե՛ ոչ: Դրանից բացի, տրամաբանական հարցադրման ժամանակ կամ հարց տվողը կամ պատասխանողը երկմտում են, իսկ ապացուցողականի ժամանակ՝ ոչ մեկը. ոչ ուսուցանողը և ոչ էլ ուսանողը: Չորրորդ, ապացուցողական հարցադրումները պարզ հարց ու պատասխանից են բաղկացած, ինչպես ասենք, մարդը կենդանի է. կենդանին գոյավոր է, հետևաբար մարդը նույնպես գոյավոր է: Իսկ տրամաբանական հարցադրումները բաղադրյալ են, որի պատճառով երկու կողմերը հակադրվում են, քանի որ պատասխանը պետք է լինի բաղադրյալ: Իսկ եթե բաղադրյալ հարցին պարզ պատասխան է տրվում, ապա երկմտում են: Ինչպես ասենք, հարցնում են՝ աշխարհը անապական է, թե ապականված: Սա բաղադրյալ հարց է: Եթե պատասխանես պարզ՝ աշխարհն անապական է, սուտ ես, որովհետև այն մասամբ ապականված է: Իսկ եթե պատասխանես՝ ապականված է, դարձյալ սուտ ես, որովհետև երկինքը և տարրերը անապական են, հետևաբար պետք է տրվի բաղադրյալ պատասխան՝ մեծ մասամբ անապական է և մասամբ՝ ապականված:

Սրանք զանազանվում են նաև այլ կերպ, ըստ իմաստասերի, ամեն մի իրողություն չորս հարցի է պատասխանում. կա, ինչ է, ինչպիսին է, ինչի համար է: Արդ, եթե միայն «կա» հարցն է՝ տրամաբանական է, իսկ եթե «ինչ է» և «ինչպիսին է» հարցերին են՝ ապացուցողական են: Երկրորդ, չորս կերպ են զուգորդվում անունը և առարկան. կա, որ անունը մեկն է, առարկաները՝ բազում, ինչպես «կենդանի» անունը, որ կարող է վերաբերվել կամ բանականներին կա՝ այլ կենդանիների: Կա, որ անունը և առարկաները տարբեր են Պետրոսը խոսում է, Պողոսը քարոզում է: Կա, որ անունները մի քանիսն են,

առարկան՝ մեկը, ինչպես՝ կենդանի, բանական, երկոտանի մարդ: Կա, որ և անունը, և առարկան մեկն է՝ մարդ-Պետրոս: Ահա սրանից երկուսը, այն որ անունները մի քանիսն են, առարկան՝ մեկը, և որ անունն ու առարկան մեկն են, տրամաբանական հարցադրումներ են: Իսկ երկուսը, այն որ անունն ու առարկան տարբեր են և անունը՝ մեկը, առարկաները՝ տարբեր, ապացուցողական հարցադրումներ են:

Երրորդ, տրամաբանական հարցերը տրվում են երկկողմանի հակադրությամբ, իսկ պատասխանը տրվում է մեկին, ինչպես՝ եթե հարցնեն՝ Պետրոսը նստած, թե ոչ, պատասխանում են՝ այո կամ ոչ: Իսկ ապացուցական հարցերը միակողմանի են տրվում, ինչպես՝ օրինակ, ի՞նչ է մարդը, ինչ է երկինքը:

Եվ չորրորդ, տրամաբանական մեկ հարցին տրվում է մեկ պատասխան, ինչպես ցույց տվեցին: Իսկ ապացուցական մեկ հարցին կարող են տրվել բազում պատասխաններ և բազում հարցերին՝ մեկ պատասխան: Ինչպես եթե մեկը հարցնի՝ ինչ է մարդը. կպատասխանենք սահմանումներ տալով, որ բաղում են: Ինչն է, որին սահմանումը ասում է՝ կենդանի, բանական-մարդն է: Ապա ուրեմն, ակնհայտ է, որ առաջիկա հարցադրումները ավելի ապացուցական են հաստատվող ճշմարտությամբ, քան տրամաբանական հակաճառությամբ:

Յուրաքանչյուր առարկա գործողության չորս պատճառ է ունենում՝ արարողական, նյութական տեսական և կատարողական, այսինքն՝ արարողը, արարվածը, արարումը և նպատակը, ինչպես տուն կառուցելիս՝ արհեստավոր հյուսնը, կառուցված տունը, տան ձևը՝ կլոր կամ քառանկյունի, իսկ նպատակը՝ մարդու բնակությունը:

Իսկ առաջիկա շարադրանքում «կառուցված տները» հարցերի տասը բաժիններն են, որ շարակարգվել են հետևյալ կերպ:

Առաջին, առարկություն այլազգիների դեմ և պատասխան նրանց ընդդիմախոսությամբ, որոնք Անհրաժեշտությունը և ճակատագիրը, չարն ու բարին Աստծուն են վերագրում: Նաև ընդդեմ մանիքեցվոց և հրեաների: Երկրորդ, ընդդեմ Արիոսի, հոգեմարտների, Նեստորի, երկաբնականների: Երրորդ, Սուրբ Դիոնիսիոսի ճշմարիտ աստվածաբանության մասին՝ համառոտ ցուցումներով: Չորրորդ, վեց օրերի և ամբողջ աշխարհի արարման մասին: Հինգերորդ, մարդու լինելիության մասին: Վեցերորդ, արարածների մասին ի սկզբանե՝ ըստ Մովսեսի հինգ գրքերի պատմության կարգի: Յոթերորդ, Հեսուի և դատավորների, հինգ թագավորությունների մասին՝ համառոտ: Ութերորդ, Աստծո մարդեղության մասին՝ ըստ նոր կտակարանի: Իններորդ, զանազան հարցումներ՝ նոր եկեղեցու մասին: Տասներորդ, Աշխարհի փոփոխման և ավարտի, հարության և հատուցման դատաստանի մասին:

Ահա սրանք են տասը հարցերի նպատակները: Իսկ տեսականը և կատարողականը լինելու է սրանց պատասխանը՝ ընդդիմախոսությամբ և հասնելը մեր եկեղեցու իմաստասերների ձեռք բերած ճշմարտությանը:

Իսկ այս գրքի պատճառը եղա ես՝ ապիկար, տխեղծ ձեռքով և տկար անձով Գրիգոր Բանասերս, աշակերտներից մեկի՝ ուղղահավատ Ատոմի խնդրանքով և անվանեցի գիրքս այս՝ ըստ բովանդակության՝ Հարցմունք Գրիգոր սպասավորի:

Եվ սրա գրելու պատճառները երեքը եղան: Նախ՝ վերոհիշյալ Ատոմը, որ բազում անգամ աշակերտներիս կողմից խնդրեց և հնար չեղավ ընդդիմադրել: Երկրորդ, երկնչեցի Աստվածախոսից պատժի արժանանալ հավատացյալներից քանքարը թաքցնելու համար, որովհետև ասում է, այն գանձը, որ կուլ են տվել, դուրս է գալու նրանց որովայնից, ովքեր Աստծո խոսքը սովյալներից թաքցրել են: Երրորդ, որպեսզի իմ աշխատությունը միայն ներկայիս լսողների համար չլինի, հոգ տարա, որ գրչով ավանդեմ նաև հետնորդներին՝ աղերսելով, որ յուրաքանչյուր ոք, ո՛վ կընթերցի սրա էջերը, Աստծուն թող իմ հասցեն մաղթանքներ մատուցի:

Արդ, այս աշխատանքս ձուլեցի ի Քրիստոս կանգնեցված վեմին և ողջ շինվածքը չորս սյուներով հաստատեցի: Առաջին սյունը առաքելական քարոզությամբ կառուցեցի, երկրորդը՝ մարգարեների վկայություններով, երրորդը՝ ճիշտ մեկնություններով և չորրորդը՝ ընթերցողների հավանությամբ և ճշմարտասիրությամբ:

Եվ ոչ ոք թող չկասկածի՝ մտքում երկբայելով, որ կարող է սրբերի խոսքերից հավաքվածը թյուրված լինի: Եվ ավելացնեմ, որ մենք վարվել ենք ոչ թե ըստ իմաստասերների, որոնց գրքերում բազում են սխալները, և ես ինքս գիտեմ նրանցում պակասն ու շատը, անկարգն ու կրկնվելը, որոնք պարզվել են նաև հետաքննողների քննությամբ, այլ հոգ ենք տարել՝ ըստ ճշմարիտ դավանության, որպեսզի ոչ մի մեղադրանք չլինի մեզ հետ միասնական համաձայնության եկածների նկատմամբ և ոչ էլ՝ լուրջ ուսումնասիրողների կողմից:

Նաև համառությամբ աղերսում եմ կամայականորեն ոչինչ չթյուրել, ինչպես նրանք, որ սովոր են եղծել և խեղաթյուրել Սուրբ գրքերը, և այդպիսի իրենց անձը դատապարտության մատնել, որովհետև գրված է, որ եթե մեկը միտումնավոր որևէ բան է ավելացնում դրանց, ապա Տերը կավելացնի նրա վրա բոլոր այն հարվածները, որ գրված է Սուրբ գրքում, իսկ եթե նույն կերպ պակասեցնի, ապա ինքը ևս կպակասի կենաց գրքից՝ գրված այս գրքում: Ամեն, եղիցի~, եղիցի~:

Այլև կենաց գրքում անջնջելի հիշատակությամբ թող գրվեն ուշիմ մտքով և հոգացող օրինակողների անունները»:

### **«Յիշատակարան**

Արդ՝ ես վերջին ծնունդս եկեղեցույ և տրուպս բանասիրաց, Գրիգոր պիտակ անուն խնդրող բանին. բացայայտեցի զբանս Հարցմանց ի լուսաւոր բանից վարդապետաց եկեղեցույ: «Ի խնդրոյ ումեմն բանասիրի Ատոմի ուղղափառի: Որ ի վաղուց հետէ բազումս թախանձէր: Եւ վասն իմոյ

տկարութեան և ժամանակիս վրդովման զխնդիրն յապաղէի: Եւ ապա ի սէր և անձուկ ժտելոյ նորին, ապաստանեալ ի նոյն որ զօրացոյց զտկարս, ձեռն ի գործ արկեալ աւարտեցաւ բազում միջոցաւ. և փախստեամբ ի տեղիս. և մեծ ջանիւ փութացեալ:

Որ և ոչ ժամանեաց ի կատար բանիս վերոյ ասացեալ խնդրոյն: Այլ ի հասարակ գրոյս՝ հասարակեաց և նա զկեանս առօրեայ. հասեալ ի գանձ իմաստից և յաղբիւրն զիտութեանց: Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի ամէն:

Ա՛րդ՝ եղև զրաւ բանիս, ի շրջագայութեան Հայկազեան Տօմարի, պիւզ թուի: Ընդ հովանեաւ երկնահանգէտ մեծարագոյ ուխտի Սիւնեաց նահանգի: Առաքելական աթոռոյ սուրբ առաքելոյս. և այլ շրջակայ հրեշտակաբնակ սուրբ Մենաստանեայց: Որոց խնամօք ամրացեալ փրկեսցոյր յամենայն փորձութեանց ամէն: Իսկ լուծումն հարցմանցս այսոցիկ, ո՛չ ամենևին օտարաձայն աւելորդս խուզեալ. և ո՛չ գեղջուկ իմն աշխարհական խօսից յարմարեալ: Այլ զպիտանիս եկեղեցւոյ և վարդապետաց ոգէշահ խնդիր հաւատոյ միա՛յն հոգ տարեալ: Ուղղակի ճշգրտութեան և անըստգիտ իմացման: Բովանդակեալ ոչ զամենայն որ ամենեցունց է զիտելի. այլ զբանս բազումս որ բազմա՛ց է պիտանի և խնդրելի:

Արդ՝ է՛ ինչ ի սմա հաւաքեալ ի լուսաւոր բանից վարդապետաց սրբոց ըստ գրոյն կամ իմացուածոյն: Եւ է՛ ինչ ի ներգործութեանց հոգւոյն աստուծոյ շնորհաց. որ ծածկէ՛ յիմաստնոց և յայտնէ տղայոց յիւրաքանչիւր ժամանակս ըստ կամաց իւրոց: Եւ թէ այս և թէ այն, դու ընկա՛լ զխնդիր մտաց քոց առանց ամենայն երկբայութեանց. իբր ի միոյ կենեղուտ աղբերէ կենաց ուռճալրացեալ և պտղաւէտեալ: Ի փառս և ի Գովեստ նորին Տնկագործի և Առաջնորդի:

Ձոր և ես զօրէն մշակաց բազմահաւաք պտղոց. կամ փունջ մի անուշահոտ բազմերանգ ծաղկանց. կամ չնչին թռչնոյ զխորիսիս մեղու. կամ որպէս զլոմայս այրւոյն տառապեալ գոյիւ:

Աղերս ընծայեցի ի գանձանակ ճոխութեան ձերդ մեծութեան. իմաստասէր և ճշմարտասէր եկեղեցոյդ Հայաստանեայց և ընթերցասէրդ մտաց:

Որ և աղաչեմ զբարեմիտ հանդիպօղսդ՝ եղբայրական սիրով հաւանիլ. զպակասն լնուլ և զաւելիսն կշռել: Եւ պիտանեացն՝ փառս վերընծայել այնմ, որ փառաւորեալն է ի պարգևս իւր. իսկ զանպիտանսն ներել մերոյ փոքր ընկալ անօթոյ և դանդաղկոտ փութոյ:

Դարձեալ, յերես անկեալ արտասուալի դիմօք հողս և փոշի՝ սուրբ զարշապարաց ձերոց, աղերսեմ ի խորոց սրտէ զհարազատ գութ հարց և եղբարց մեր հոգևորաց: Ձի կա՛թ մի արտասուաց ի կաթիլ դուլէ ձե՛րդ մաղթանաց ցօղեսցի ի գերեզման հոգւոյ իմ տառապանաց: Եւ լուսացէ զբազմաշարաւ զազրացեալ ոսկերս՝ մեղօք մեռելոյս: Ձի թերևս վասն ձեր սիրալիր մաղթանացդ՝ գտայց ողորմութիւն յամենողորմ փրկչէն մերմէ:

Այլ և վարժապետին իմոյ և մեծ հռետորի հայոց, Յոհաննու Որոտնեցւոյ, եղիցի ի սմա յիշատակ մաղթանաց մասին օրհնութեան. և վիճակ ժառանգութեան սրբոցն ի լոյս: Ձի նա՛ ծնաւ զմեզ ըստ բանի՝ բազմաջան երկօք. կրթեալ ի մամուլս վարժարանի և ի յոյսն

կենդանի: Որ և ձեզ յիշողացդ և մեզ յուսողացս առհասարակ ողորմեսցի բարերար և բազում ողորմ մարդասերն աստուած և տէրն մեր յիսուս քրիստոս ամեն:

Այլ և գերջանիկ գաղափարօղսդ մաղթեմ. որք ընդօրինակէք զգիր հարցմանցս այսորիկ, գրել և գսակաւ յիշատակս այսոցիկ: Որպէս զի և դուք լիջիք գրեալ ի գիրն կենդանեաց ա՛մէն»<sup>4</sup>:

#### «ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ»

Արդ, ես՝ վերջին ծնունդս եկեղեցու և նվաստ ուսումնականս, Գրիգոր պիտակ անվամբ, հետամտողը խնդրի, ստեղծեցի «Գիրք հարցմանց»-ը եկեղեցու վարպետների լուսավոր գրքերից, Ատոմի՝ ուղղադավան ուսումնասների խնդրանքով, որը վաղուց ի վեր բազմիցս թախանձում էր: Եվ իմ տկարության ու ժամանակի վրդովված լինելու պատճառով հապաղում էի կատարել խնդրանքը: Ապա ի սեր նրա, և քանի որ համառորեն խնդրում էր, ապաստանելով նրա մոտ, որ զորացրեց տկարիս, ձեռնարկեցի և ավարտեցի [գիրքն այս] մեծ ջանքերով, տեղից-տեղ փախչելով, շատ ճիգեր ներդնելով:

Եվ վերոնշյալ պատվիրատուն չհասավ գրքի ավարտին, այլ [այն ժամանակ, երբ գրված էր] գրքի կեսը, կիսվեց և նրա երկրային կյանքը, որտեղ նա հասել էր իմաստության գանձին ու գիտության աղբյուրին, որի հիշատակը օրհնությամբ լինի, ամեն:

Արդ, գիրքն այս ավատվեց Հայկազյան տոմարի 846 թվականին (1397թ.), Սյունյաց նահանգի երկնամատույց մեծահարգ Ուխտի, Սուրբ առաքյալների առաքելական աթոռի և շրջակա մյուս հրեշտակաբնակ սուրբ մենաստանների հովանավորությամբ, որոնց խնամաձությամբ ամրանալով՝ փրկվում ենք բոլոր փորձություններից, ամեն:

Իսկ հարցումների այս գրքում ամեն օտար բան չէ, որ խուզել ենք, ոչ էլ հարմարեցրել ենք գեղջուկ աշխարհական խոսքին, այլ հոգ ենք տարել միայն եկեղեցուն և վարդապետներին պիտանիի՝ հավատի խնդրի համար. [հոգ ենք տարել նաև] ուղիղ և ճշգրիտ, անթերի իմացման համար՝ շարադրելով ոչ թե այն, որ բոլորը գիտեն, այլ բազմապիսի բաներ, որ շատերին է պիտանի ու ցանկալի:

Արդ, սրա մեջ բաներ կան, որոնք քաղված են սուրբ վարդապետների լուսավոր թղթերից՝ [ղիմելով] կամ գրքերին, կամ՝ [բանավոր] իմացությանը: Եվ բաներ էլ կան, որոնք [շարադրվել են] Աստծո Հոգու շնորհների ներգործությամբ, որոնք իմաստուններից թաքցնում և ժամանակ առ ժամանակ մանուկներին է հայտնում՝ ըստ յուր կամքի: Եվ թե սա, թե նա, դու ընկալի՛ր բոլորովին առանց երկբայելու քո մտքում, իբրև միևնույն Կենաց

---

<sup>4</sup> Գրիգոր Տաթևացի, նույնը, էջ 772-773:

կենդանաբար աղբյուրից գորացած և պտղավորված ի փառս և ի գովեստ նորին Տնկազործի և Առաջնորդի:

Եվ ես բազմաթիվ պտուղներ հավաքող մշակի նման, իբրև անուշահոտ բազմերանգ ծաղիկների մի փունջ, կամ իբրև փոքրիկ թռչնի՝ մեղվի, մեղրահաց, կամ իբրև տառապալից կյանքով [ապրող] այրու մանրադրամ, Ձերդ մեծության՝ իմաստասեր և ճշմարտասեր Հայաստանյայց եկեղեցու և ընթերցասեր մտքերի ճոխ գանձարանը տուրք ընծայեցի, որի համար աղաչում եմ բարեմիտ ընթերցողներիդ հավանությունն տալ եղբայրական սիրով, պակասը լրացնել, իսկ ավելորդը մի կողմ թողնել և պիտանիի համար փառք տալ նրան, որ փառավորն է իր պարգևների մեջ, իսկ անպիտանի համար ներել մեզ՝ փոքրնկալ անոթ և ծանրամիտ լինելու համար:

Ապա արտասովալից դեմքով երեսնիվայր ընկած հողի և փոշու մեջ և ձեր սուրբ ոտքերի առաջ, ի խորոց սրտի աղերսում եմ ձեր գութը՝ իմ հարազատ հոգևոր հայրե՛ր ու եղբայրնե՛ր, մի կաթիլ փոքրիկ արտասուքով ցողե՛ք իմ տառապալից հոգու գերեզմանը և թրջե՛ք մեռելային մեղքերով պղծված իմ թարախալից ոսկորները, որ միգուցե ձեր գթառատ մաղթանքների շնորհիվ կարողանամ ողորմություն գտնել Ամենաողորմ մեր Փրկչից:

Այլև իմ վարժապետի և Հայոց մեծ հռետորի՝ Հովհան Որոտնեցու, հիշատակի մաղթանքները լինեն օրհնությամբ և լույսի վիճակն [ընկնի նրան] սրբերի ժառանգությունից, քանզի նա ծնեց մեզ Բանի նմանությամբ՝ բազմաջան չարչարանքով, կրթելով դպրության և կենդանի հույսի համար:

Եվ ձեզ էլ՝ հիշողներիդ և մեզ ուսումնասիրողներիդ առհասարակ թող ողորմի բարերար և բազմաողորմ մարդասերն Աստված և Տերը մեր Հիսուս Քրիստոս, ամեն:

Այլև երջանիկ օրինակողներիդ, ովքեր, որ ընդօրինակեն «Գիրք հարցմանց»-ն այս, մաղթում եմ, այս փոքրիկ հիշատակարանն էլ գրել, որպեսզի դուք էլ գրվեք Կենաց գրքում, ամեն»:

Григорян Сусанна Макаровна

Резюме

"Книга вопрошений" Григора Татеваци и толкование Библии

В литературном наследии Григора Татеваци имеется значительное число толкований и анализов, которые представляют собой новые толкования широко распространенных в армянской действительности и

многократно интерпретированных трудов. в эпоху Татеваци находился в весьма неблагоприятных, тяжелейших условиях не только в политическом плане. Возникла строгая необходимость пробудить в народе национальный дух, веру в человеческое, в добро и прекрасное. Именно эту цель и преследовал Татеваци в своих трудах. При их написании Татеваци преследовал цель сделать более доступной и удобопонятной традиционную толковательную литературу, присовокупляя к ним и свои оригинальные толкования. Его знаменитая "Книга вопрошений" является своеобразной энциклопедией многочисленных вопросов и соответствующих ответов, которые интересовали и волновали не только просвещенные умы средневековья, но и широкие слои народа.

**Труды Григора Татеваци, с одной стороны, становились обобщением созданных его предшественниками ценностей, а с другой стороны, благодаря широким теоретическим обобщениям и оригинальному анализу, знаменовали новый этап в развитии средневековой армянской научной мысли.**

